

# Քից փոքր

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան  
Հիշողության սահմանափակում՝ 256 MB  
Կշիռը՝ 100 միավոր

## Շարադրանք

Տրված են  $\theta$  և  $1$  թվերից կազմված  $n$  երկարության հաջորդականություն և  $x$  թիվը:  
Անհրաժեշտ է գտնել այն միջկայքերի քանակը, որոնց համար այդ միջակայքում գրված երկուական կոդին համապատասխան թիվը **փոքր է**  $x$ -ից:

## Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված են  $2$  բնական թվեր՝  $n$  և  $x$  ( $1 \leq x \leq 10^9$ ): Հաջորդ տողում տրված են բացակով անջատված  $n$  հատ թվեր, որոնցից յուրաքանչյուրը կամ  $1$  է, կամ  $\theta$ :

## Ելքային տվյալներ

Ելքի միակ տողում անհրաժեշտ է արտածել  $1$  թիվ՝ այն միջակայքերի քանակը, որոնց համար այդ միջակայքում գրված երկուական կոդին համապատասխան թիվը փոքր է  $x$ -ից:

## Օրինակ

Մուտք	Ելք
5 3 0 0 1 1 0	9
1 1 1	0

## Ենթախնդիրներ

- Ենթախնդիր 0 (**0 միավոր**) Օրինակները,
- Ենթախնդիր 1 (**10 միավոր**)  $1 \leq n \leq 300$ ,
- Ենթախնդիր 2 (**20 միավոր**)  $1 \leq n \leq 5000$ ,
- Ենթախնդիր 3 (**70 միավոր**)  $1 \leq n \leq 10^5$ :